

6 հմտություններ, որոնք պետք կգան երեխաներին հետագայում

Բոլոր ծնողներն էլ ցանկանում են, որ իրենց երեխաները լինեն գրագետ և բազմակողմանի զարգացած, ստանան բարձր գնահատականներ դպրոցում և բուհում:

Այո իհարկե մենք բոլորս էլ կարիք ունենք ձեռք բերելու և զարգացնելու բազմակողմանի և լայն գիտելիքներ տարբեր ասպարեզներից, բայց կան նաև մի շարք հմտություններ, որոնք պակաս կարևոր չեն հետագայում հաջողության հասնելու համար: Բոլորս էլ լավ գիտենք, որ ցանկացած մասնագիտության գործատու նախընտրում է աշխատողների, ովքեր գիտեն, թե ինչպես լուծել ծագող խնդիրները, ստեղծագործել, համագործակցել և շփվել:

Այսպիսով, ձեզ ենք ներկայացնում 6 կարևոր հմտություններ, որոնք զարգացնելով ձեր երեխաների մոտ, կօգնեք նրանց լինել ավելի հաջողակ:

1. Դժվարությունների և խնդիրների լուծման հմտություն:

Մեծահասակների մրցակցային աշխարհ մտնելու և նրանում հաջողության հասնելու համար երեխաները պետք է կարողանան քննադատորեն մտածել, դիտարկել, վերլուծել և գտնել լուծումներ տարբեր բարդ իրավիճակներից և դիլեմաներից: Այդ

հմտությունը կարելի է զարգացնել նրան հակադարձող հարցեր տալով:



Օրինակ. եթե նա հարցնում է, թե ինչո՞ւ հնարավոր չէ կառուցել ստորջրյա քաղաք, կարող եք հարցնել, իսկ նա ի՞նչ է կարծում, ինչո՞ւ :

Թույլ տվեք, որ երեխան արտահայտի մի քանի ինքնուրույն տարբերակներ, որոնի այդ հարցի պատասխանը համացանցում, հետո պատմի ձեզ իր փոքրիկ ուսումնասիրության արդյունքները:

Հնարավորինս շատ բան պետք է դառնա երեխայի ինքնուրույն ուսումնասիրության առարկա: Շատ կարևոր է, որ ծնողի ճիշտ և խելացի ուղղորդմամբ երեխան սովորի դուրս գալ բարդ իրավիճակներից և կարողանա գտնել այլընտրանքային լուծումներ:

2. Համատեղ գործունեության հմտություն



Ապացուցված է, որ կոլեկտիվներում առավել լավ արդյունքներ են ստացվում արդյունավետ համատեղ աշխատանքի արդյունքում: Դպրոցում երեխաներին սովորեցնում են կառավարել իրնեց, լինել հաղորդակցվող և կառավարել ժամանակը:

Բայց համատեղ գործունեության հմտությունները կարելի է զարգացնել նաև տանը: Կարող եք կազմակերպել համատեղ խոհանոցային օր և երեխաների հետ պատրաստել թխվածքներ, բարդ ճաշատեսակներ: Երեխաներին նաև հետաքրքիր կլինի նկարահանել և մոնտաժել սեփական փոքրիկ ֆիլմը:

3. Տեղեկատվական տեխնոլոգիաների ճիշտ օգտագործման հմտություններ:

Ճիշտ է, որ երեխաները հաճախ մեծահասակներից ավելի լավ են գլուխ հանում այժմյան հեռախոսներից և համակարգիչներից: Բայց առավել հաճախ դրանք

օգտագործում են սոցցանցերի, նկարների դիտման, մուլտֆիլմների և խաղերի համար: Իսկ հետագայում նրանց պետք է լինելու հստակ կողմնորոշվել մեդիա-



տեղեկատվության ահռելի

հոսքի մեջ:

Երեխաներին պետք է սովորեցնել օգուտ քաղել համացանցից: Կարող եք նրանց առաջարկել գտնել որևէ տեղեկություն, կազմել մի քանի երթուղիներ վիրտուալ քարտեզներով:

4. Տարածական մտածողության հմտություն

Այս հմտությունը մենք օգտագործում ենք ամեն օր մեր առօրյայում: Տարածական պատկերացումն ու հասկացումը, ունակությունը մտովի վիզուալիզացնել օբյեկտները կարևոր հմտություն է: Այն օգնում է հեշտությամբ կողմնորոշվել անձանոթ միջավայրում, ճիշտ օգտագործել տրված տարածությունը:



Տարածական հմտությունները

զարգացնելուն շատ օգնում են լեզուներն ու կոնստրուկտորները, նաև այն համակարգչային խաղերը, որտեղ պետք է ինչ-որ բան կառուցել մանր դետալներով: Նաև կարելի է առաջարկել երեխային մտովի վերհիշել և կառուցել իրեն ծանոթ երթուղիները, ծանոթ սենյակների կահավորանքը և այլն:

5. Լակոնիկ խոսքի հմտություն

Հակիրճ և պարզ արտահայտվելու ընդունակությունը պարզապես անհրաժեշտ է հասուն տարիքում: Այն կգնահատեն բոլոր գործատուները: Այդ հմտությունը զարգացնելուն կօգնի ցանկացած գործունեություն, որում երեխան պետք է դառնա

առաջնորդ և տա առաջադրանքներ, կամ ընդհակառակը պետք է լսի տրվող



առաջադրանքներն ու կատարի դրանք:

Կարող եք փորձել հետևյալ վարժությունը. Կապում են միմյանց աչքերը և ուղղորդում են սենյակով՝ գտնելու որևէ պահված առարկա: Կարելի է նաև համատեղ հորինել պատմություններ: Յուրաքանչյուրն ասում է մեկ նախադասություն այնպես, որ պատմությունը շարունակվի և չկորի սկզբնական իմաստը:

6.Ստեղծագործական մտածողություն



Ստեղծագործականությունը հարկավոր է ցանկացած գործունեության մեջ: Այդ պատճառով այն պետք է երեխաների մեջ զարգացնել և խրախուսել:

Ստեղծագործական մտածողության զարգացման համար կան բազմաթիվ խաղեր, բայց նաև հարկավոր է անդադար հարցնել, թե ինչպես երեխան կլուծեր այս կամ այն խնդիրը: Հետաքրքիր խաղ է սովորական իրերի մեջ անսովոր կողմեր որոնել: Դա կարող է լինել թե արտաքին տեսքի հետ կապված, թե այդ առարկայի օգտագործման հետ:

Հիմա դուք գիտեք, թե ինչպես կարող եք դաստիարակել և մեծացնել հաջողակ երեխաների: Դուք ինքներդ էլ հանգիստ կարող եք ձեր մեջ զարգացնել դրանք և փոխել ձեր կյանքը: